

ԿԱՐԴԻՆԱԼ ԳՐԻԳՈՐ ՊԵՏՐՈՍ ԺԵ. ԱՂԱՋԱՆԵԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՊԱՏՐԻԱՐՔ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

© National Library of Armenia

Ի ԲԱՐԵՆՇԱՆ ԱԻՈՒՐ

ՅՈՐՈՒՄ ԳԵՐԵՐՋԱՆԻԿ ՀՈԳԵՒՈՐ ՏԷՐՆ

# Տ. Տ. ԳՐԻԳՈՐ ՊԵՏՐՈՍ ԺԵ. ԱՂԱՋԱՆԵԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՊԱՏՐԻԱՐՔ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻԱՅ

## ԿՈՉԵՑԱՒ Ի ԿԱՐԴԻՆԱԼՈՒԹԻՒՆ

ԵՐԳԷ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆՍ ՎԻԵՆՆԱՅ

ԶՆՈՒԱԳՍ

Ի ծիրանիս կարմրանարաւտ տեսաք զՔեզ խոյրընկալ,
Կաթողիկէ Եկեղեցւոյ ծիրանափառ կարդինալ.
Ցեւթանասուն ծիրանաւորս յազգաց ազգաց այրընտիր
Դու բազմեցար հայկեան տոհմիս արժանաւոր շքադիր:

Մերձ առ սընարս Առաքելոցն ծաղկեցար իսկ բարեզարդ.
Եւ զի՞նչ իցեն ընշոյլք լուսոյ որ հատանին ի Քէն արդ.
Հոգւոյն բոցով վառեցար Դու զինչ մորենի ի Քորեբ,
Եւ բանք Հոգւոյն ի քո շըրթունս որպէս պատգամք անվրէպ:

Դէտն կեփայեան յընտրութեան անդ կորովաբիբ սըրատես,
Ցարժանաւորս զարդիւնականս որպէս զարծուի քաջ ետես:
Որ ի տոհմիկս եւ յանտոհմիկս արժանեաց եղ ի խնդիր,
Քաջաց ի գլուխս եդ ըզդափնիս, պըսակս փառաց անխտիր:

Ազգք եւ ազինք միահամուռ հիւսեցին գովս դրուատեաց.
Պսակադրին զամս ուրհնեցին, որ զայնչափ ազգըս պատուեաց,
Պըսակելոցդ զփառս երգեցին, զսեպհականացդ զարժանիս.
Զի փառք որդւոց պարծանք են հարց, յուշք անմոռաց յընտանիս:

Եթէ հըռչակ քոյոց փառաց հարաւ արձակ ընդ հանուր,
Ի մեզ հատաւ իբրեւ զշանթ իս, խզեաց զսարիս եւ զանուր.
Հնչեաց համբաւ աւետաբեր առ ազգակիցսդ հարազատ.
Ի Քեզ ծանեաք, ի ծիրանիսդ, զիշխանըն մեր եւ զազատ:

Դու աստղ պայծառ յայտնեցար մեզ ի կամարին Հայաստան.
Եւ շողայցես յաւերժ փառաց առհաւատչեայ մերոյ Տան:
Քեւ պարծեսցի ածուս մեր փոքր ի մեծամեծս քաջանուն,
Քեզ երաշխիք մեծարանաց ի սիրտս մեծին եւ մանուն:

Այսաւր ցընծան եւ դըրանդիք Մըխիթարայ Մեծի տանս,
Դասք համօրէն ուխտի մանկանց կան հոգեխառն ի մաղթանս.
Ցաղերս անկեալ խընդրեն յերկնից Քեզ յամս յամայրս արեւ շատ,
Զի ծիրանեացդ ընդ հովանեաւ եւ հաւտս կացցէ անարատ:

Հ. Ն. Ա.



© National Library of Armenia